«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի գլխավոր տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու նպատակով հայտերի հավաքագրման հայտարարություն

Աշխատանքի նկարագիր. «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի գլխավոր տնօրենը պատասխանատու է Հայաստանի Հանրապետությունը՝ որպես միջազգայնորեն մրցունակ ներդրումային միջավայրի դիրքավորման, Հայաստանի զարգացման ռազմավարական առաջնահերթություններին համահունչ ներդրումների ներգրավման և դրանց ուղեկցման աշխատանքների ղեկավարման համար:

Աշխատանքային պարտականություններ. «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի գլխավոր տնօրենը ղեկավարելու է հետևյալ աշխատանքները.

- Հայաստանի Հանրապետությունում գերակա հայտարարված ոլորտներում օտարերկրյա ներդրումների խթանում,
- Հայաստանի ներդրումային վարկանիշի բարելավման աշխատանքների իրականացում, այդ թվում՝ ժամանակակից մարքեթինգային գործիքների արդյունավետ կիրառմամբ,
- Հայաստանի Հանրապետությունում՝ «Fortune Global 500», ինչպես նաև «The World's Most Valuable Brands» վարկանիշային ցուցակներում ընդգրկված ապրանքանիշերի ներկայացվածության ընդլայնում,
- Համապարփակ աջակցության տրամադրում Հայաստանում նշանակալի ներդրումներ կատարելու ծրագիր ունեցող գործարարներին,
- Մեկնարկած նշանակալի ներդրումային ծրագրերի հետներդրումային սպասարկման իրականացում՝ ի հայտ եկող խոչընդոտները կարգավորելու նպատակով,
- Պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային ֆինանսական և զարգացման գործակալությունների, տեղական և օտարերկրյա այլ ոլորտային կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության ապահովում,
- Հայաստանի ներդրումային միջավայրը բարելավելու առաջարկությունների ներկայացում պետական կառավարման մարմիններին՝ բարեփոխումների գործընթացին աջակցելու նպատակով,
- Առանձին ոլորտներում ներդրումային հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական փաթեթների ձևավորում,
- Ներդրումների ներգրավմանն ուղղված՝ նշանակալի ներդրումային առաջարկների փաթեթների մշակում:

Գլխավոր տնօրենի թեկնածուին ներկայացվող պահանջներ.

- Բարձրագույն կրթություն տնտեսագիտության, բիզնեսի կառավարման, բնական գիտությունների, ՏՀՏ կամ հարակից ոլորտներում,
- Առնվազն 7 տարվա աշխատանքային փորձ տնտեսական զարգացման, ներդրումների ներգրավման կամ բիզնեսի կառավարման ոլորտներում, որից առնվազն 3-ը՝ ղեկավար պաշտոններում,
- Հայաստանի գործարար միջավայրի և ներդրումային քաղաքականության առանձնահատկությունների իմացություն,
- Ներդրումային քաղաքականության և ներդրումների խթանման բնագավառում միջազգային փորձի և արդյունավետ մեխանիզմների իմացություն,
- Պետական կառավարման մարմինների, միջազգային զարգացման գործակալությունների և մասնավոր հատվածի հետ արդյունավետ համագործակցության փորձ,
- Ռազմավարական առաջնորդման և թիմերի կառավարման, ինչպես նաև հաղորդակցության և բանակցությունների գերազանց հմտություններ,
- Հայերենի և անգլերենի գերազանց իմացություն, այլ օտար լեզուների իմացությունը կդիտվի որպես առավելություն:

Դիմելու կարգը. հետաքրքրված թեկնածուներին խնդրում ենք **մինչև ս.թ. մարտի** 21-**ը** իրենց ինքնակենսագրականը (CV), ինչպես նաև առաջիկա 3 տարիներին հիմնադրամի գործունեության և առաջնահերթությունների վերաբերյալ իրենց տեսլականը նկարագրող ուղեկցող նամակ (առավելագույնը՝ 2 էջ) ներկայացնել info_dpm@gov.am էլեկտրոնային հասցեին:

Սահմանված պահանջներին համապատասխանող թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի: